ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

12 հունիս 2019թ

N 37Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնաշենի գյուղական համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 27-ի թիվ 5 նիստի թիվ 2 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ակնաշեն համայնքի՝ 004-005-044-006 ծածկագրի տանը տրամադրել հասցե՝ Տերյան փողոց թիվ 9:
2. Սույն որոշման մեկ օրինակը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանմանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2019թվական
12 հունիս
գ.Ակնաշեն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱԿՆԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիս 2019թ

N 36Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Արմավիր մարզի Ակնաշեն համայնքի բնակիչ 00.00.1939 թվականին ծնված Մեղա Սերյոժայի Մուրադյանը դիմել է Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Տերյան փողոցի թիվ 9 հասցեում գտնվող իրեն պատկանող 0.0181 հա հողամասի վրա կառուցված 143.8 ք/մ բնակելի տան նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:
Հաշվի առնելով ,որ բնակելի տունը կառուցվել է մինչև 15.05.2001 թվականը, հողամասը ընդգրկված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, <<Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, ՀՀ համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանած անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ,ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել ՀՀ Արմավիրի մարզի Ակնաշեն համայնքի Տերյան 9 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ 00.00.1939 թվականին ծնված Մեղա Սերյոժայի Մուրադյանի գույքային իրավունքները ,ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.0181 հա հողամասի վրա 1967 թվականին կառուցված 143.8 ք/մ բնակելի տան նկատմամբ:
2. Բնակելի տան մակերեսը ենթակա է ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:
3. Առաջարկել ՀՀ ԱԳԿ ՊԿ ՄՄՍ գրանցել 00.00.1939 թ-ին ծնված Մեղա Սերյոժայի Մուրադյանի սեփականության իրավունքը սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վրա կառուցված բնակելի տան նկատմամբ ,տրամադրելով անշարժ գույքի իրավունքի սեփականության վկայական:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում որոշման պահից:

Համայնքապետ՝ Մ.Միսակյան

2019թվական
12 հունիս
գ.Ակնաշեն